



Ս. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

(Դպրացեսու Երևանի)

Ս. Հովհաննես եկեղեցու)

ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՆԴԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Ձեռնալեզ ի սրբոյ կուսէն
Ընկալցոյ՜ ի սիրտս մեր հաւատով,
Որպէս երբեմն ի գիրկսն Սիմէօն»:

ՇԱՐԱԿԱՆ



Մենքը Երևան քաղաքի հյուսիսային մասում գտնվող հնագույն թաղամասերից է: Այնտեղ է գտնվում պատմական Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Բարձունքի դեռ հերթից վարելի է տեսնել բաց վարդապետական կատարին բարձրացած զանգակատան գմբեթը՝ Քրիստոսի դարավոր պատմությունը խորհրդանշող իր խաչով: Ոլորապտույտ կարճ ճանապարհից հետո դուք կանգնում եք եկեղեցու ընդարձակ սրահի առաջ:

Եկեղեցու չորս լայնահաստ սյուների վրա հանգչող բազմաթիվ կամարները ցարդ անխախտ պահում են սկզբնական իրենց ամուրի ճարտարապետական վառուցվածքը: Յուրաքանչյուր սյուն զեղազարդվել է մեկից ավելի սրբերի յուզաներով նկարներով և վիմարիոր հինավուրց արձանադրություններով:

Քիչ առաջ շարժվելով, դուք կանգնում եք եռյակ խորանների (ավագ խորանի՝ Ս. Երրորդության անունով, աջ կողմում՝ Ս. Հովհաննեսի, խակ ձախում՝ Ս. Գրիգոր Լուսավորչի) սրբազան քեղեցկության առաջ, որը լուսավորված է բազմաստեղյան էլեկտրական ջահերով: Ամենանուրբ ճաշակն ու բժախնդիր հեռաքրքրությունը գոհացնող ինչպիսի՜ յուզաներով նկարներ՝ «Վերջին ընթրիքը», «Հարությունը», «Համբարձումը» և

«Երկոտաձև առաքյալները», մեկը մյուսից սքանչելի, մեկը մյուսից ներշնչող:

Սովետական իշխանության օրով մի քանի անգամ վերանորոգվել է այս եկեղեցին և ավելի պաշտառացել տեղի ավագներից տեղի վարդան ավագ քահանա Գրիգորյանի և հոգաբարձության օրինակելի ջանասիրության շնորհիվ:

Եկեղեցում պաշտոնավարում են երկու քահանա հայրեր, մեկը տեղացի՝ տեղ. վարդան ավագ քահանա Գրիգորյանը, մյուսը՝ հայրենադարձ, Լիբանանի Բեյրութ քաղաքից ներգաղթած տեղ. Թորոս քահանա՝ Մաճարյանը: Երկուսն էլ, հակառակ իրենց առաջացած տարիքին, պահում են մտքի և հոգու կայտառությունը, պարտականության գիտակից բարի հովվի նման համեստ, միշտ պատրաստ աշխատելու ի պաշտառություն Հայաստանյայց Ս. Եկեղեցու Նրա՛նք, ամեն օր, առավոտ և երեկո, եկեղեցական կանոնադրության հիման վրա, անշեղ և անթերի, կատարում են ժամերգություն և հոգեպիս միտքարում ժողովրդին:

1952 թվականի ապրիլի 10-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ. Հայրապետը, ղեհատելով այս քահանաների պարկեշտ և անձնավեր գործունեությունը, երկուսին էլ պարգևատրել է լանջախաչ կրելու իրավունքով:

Զույգ քահանաների գործունեությանը զորավիգ է հողաբարձությունը, որի անձնակերանդամները ջանք չեն խնայում եկեղեցին արժանավոր բարձրության վրա պահելու համար. ահա՛ թե ինչու Աստծու հոյակապ այս տաճարը օրեցօր դառնում է ավելի պայծառ, ավելի ներշնչող:

Եկեղեցին ունի իր երկանո դպրաց խումբը՝ երգեհոնի ընկերակցությամբ: Նրանք երկար տարիներ կամովին, հրճվանքով դալիս են Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցին երգելու:

Ակնբախ մի ոգևորություն է տիրում ավագ խորանի առաջ: Ճաշոց գիրքը, վստահ մատների շփումով, սկսում է քակվել: Լուսու խորհրդավոր է պահը: Բոլորի սրտերն ու հոգիները հուզվում են՝ Դանիելի գիրքն է: Իրարանցում է ժամկոտների մեջ. մի բուպեկս է ահա սկսվում են վառվել մոմերը հարյուրավոր ձեռքերի մեջ: «Օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք և բարձր արարէ՛ք զնա յաւիտեան» սրբազան երգը ուղիորեն դուրս է դալիս դպիրների շրթներից:



Տ. Վարդան ավագ Բախան Դրիգորյան և Տ. Թորոս Բախան Մանաշյան

Այս տարի, ինչպես միշտ, պատշաճ հանդիսավորությունով անցան Մենդյան և Մկրտության տոները Ս. Հովհաննես եկեղեցում: Օրեր ու շաբաթներ առաջ հավատացյալներն արդեն պատրաստվել էին տոներին: Ահա և ճրագալույցի օրն է: Ամբոխաված հավատացյալների հոգիները խայտում են ուրախության մեջ: Ս. Հովհաննես եկեղեցին իր ամենամեծ շքեղությամբն է դարձրել: Գեղատեսիլ վարազույթների հետե, աստղերի նման, փայլում են էլեկտրական մոմերի պայծառ լույսերը կամարակապ ձեղունից առկախ: Նրեք խորանների ներսն ու դուրսը, տաճարն ամբողջ, մշուշվում է խունկի բուրմունքից: Մաղթանքների մըրմունջներ, հոգեհավաք թրթռումներ, սրբազան երաժշտություն, զանգ ու ծնծղա հաջորդում են իրար ի խնդություն հավատացյալ հոգիների, ի փառաբանություն Մենդյան նախօրյակի:

Արարողություններից հետո մատուցվում է սուրբ պատարագ:

Հաջորդ օրն է՝ «Տօն Մենդեան և Յայտնութեան»:

Ջանդերն իրենց ղողանջներով դարթեցնում են հավատացյալներին Փրկչի ծննդյան ավետիսով, ինչպես հրեշտակներն անցյալում՝ դաշտի հովիվներին: Քրիստոնեական դարավոր պատմության էջերի կրկնությունը վերսկսում է 1953-րդ անգամ արշալույսի թարմությամբ օծուն զանգերի բերնով:

Մոտիկ և հեռաբնակ հավատացյալների շարքերը խտանում են հետզհետե դեպի եկեղեցին առաջնորդող բազմաթիվ ճամբաներում: Տարիք և սեռ միախառնված, հնավանդ ջերմեռանդությունով, եկեղեցու արտաքին պատերն իսկ համբուրող հավատքով խտանում են տաճարում:

Դեռ շատ շուտ, եկեղեցու պատերն արդեն ճնշվում են ուխտավորների բազմության առաջ:

Կենդանի մատաղացուներ և պատրաստված մատաղներ անվերջ օրհնվում են իրար հետևից և բաժանվում իրար մեջ եկեղեցու լայնածավալ բակում: Բաժանողի հավատավոր կեցվածքն ու ստացողի սրտաբուխ մաղթանքները պարզում են մի սիրազեղ տեսարան:

Սկսում է ժամերգությունը: Եկեղեցու տոնական արտակարգ տեսքը, ավագ խորանի առաջ պատրաստված ծննդյան արհեստական, մսուրը և եկեղեցական արարողության ընթացքը հավատացյալին փոխադրում են հոգեկան ապրումների մի այլ աշխարհ:

«Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց...»: Եվ եկեղեցու զույգ զանգերի հնչումով ժամվորները հասնում են իրենց վերացման դադարնակետին, ձեռքներն ու աչքները բարձրացրած դեպի խորանի վեհությունը, ցանկանում են իրենց աղոթքների նշխարներն

հասցնել սերովբեների և քերովբեների քաղցրածայն փառաբանության:

Պատարագի ողջ ընթացքում հսկայական բազմությունը պահում է օրինակելի կարգապահություն: Երբեմն իրենց մոր փեշերից կախ ընկած փոքր երեխաներն իսկ, կարծես զգալով պահի խորհրդավորությունը, բացարձակ լռություն են պահում:

«Հայր մեր»ի ժամանակ պատարագիչ քահանան առաջինը պաշտոնապես ժողովրդին տալիս է Մենդյան ավետիսը, բարեմաղթելով աշխարհին խաղաղություն, հիվանդացի բժշկություն և եղբայրսիրություն:

Պատարագին հաջորդում են «Ջրօրհնէք»ի տաղերն ու աղոթքները: Տեսնելու արժանի էր, թե ի՞նչ ջերմեռանդությամբ ժողովուրդը անհամբեր բաժին վերցրեց մյուռոնով և խաչով օրհնված ջրից:

Վերջում կատարվեցին մաղթանքներ՝ աշխարհի խաղաղության, Մայր Աթոռի անսասանության և եկեղեցու պայծառության համար:

